

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՕՐԱՑՈՅՑ

2022

ՀԱՍԱՐԱԿ ԹՈՒԻՒՆ
ՔՐԻՍՏՈՍԻ



Պատրաստեց՝
Պսակ Վրդ. Թէփիրեան

ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԱՐԱՄԱՅ ԱՌԱՋՆՈՅ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



Աղբիւր կենաց եւ փրկութեան մերոյ, Հոգի Հօր եւ Որդւոյ, ի յարմատոյն Յեսսեայ բղիման գաւազանի հասեալ ժամու, շնորհաւարդ պայծառացո՛ւ պաւազան իշխանութեան մերոյ հայրապետին. պի օրհնեսցուք պքեզ, Տէր, այժմ եւ յաւիտեան:

Լրումն աշխարհի եւ ճառագայթ իմանալի, Հոգիդ Սուրբ Աստուծոյ, ի ցնծութեան աւուր լրման ուրախութեան Յովակիմայ եւ Աննայի, աղօթիւք սոցա լցո՛ւ պէտս կարեաց Հայաստանեայց Եկեղեցւոյ. պի օրհնեսցուք պքեզ, Տէր, այժմ եւ յաւիտեան:

ՇԱՐԱԿԱՆ

ԿԻԼԻԿԻԱ.

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զֆնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր փաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերըն Սիւրիոյ,
Լեանն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի գերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոյներ,
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ,
Երբեւն մնջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

Օ Ր Ա Ց Ո Յ Ց

2 0 2 2

ՀԱՍՄԱՐԱԿ ԹՈՒԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ
(ԸՍՏ ՆՈՐՈՑ ՏՈՄԱՐԻՆ)

ԵՒ

ԲՈՒՆ (ՇԱՐԺԱԿԱՆ) ԹՈՒԻՒՆ ՀԱՅՈՑ
ՏՇԺԴ-ՏՇԺԵ = 4514-4515

ԵՒ

ՏՈՄԱՐԱԿԱՆ (ՀԱՍՏԱՏՈՒՆ) ԹՈՒԻՒՆ ՀԱՅՈՑ
ՌՆՀԱ.- ՌՆՀԲ = 1471 - 1472

Գիր տարւոյ (Տարեգիրք) Թ
Եօթներեակ (Կիրակագիր) Բ
Վերադիր (Ոսկեթել) Իէ
Իննեւտասներեակ (Ոսկեգիր) Թ
Տանուտէր ՑՈՒՎՆ

Բուն Ձայնքն՝ Ա.Ձ., Բ.Ձ., Գ.Ձ., Դ.Ձ.

Ա.ՁԱԿՈՂՄԱՆ դասուն են

սկսեալ ՚ի Բուն Բարեկենդանէն

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Օրացոյցիս երկու կողմի սիւնակներուն վերեւ նշանակուած երկու տառերը պէտք է հասկնալ Օ՝ օր ամսոյ, Լ՝ լուսնական ամիս:



Օրացոյցիս մէջ
Տօնացոյցէն դուրս եղածները
Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսարանին յատուկ են:

ՊՍԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՐԳԻԼՈՒԱԾ ՕՐԵՐ

- 1.- Յունուար 5, 6 եւ 7 (Ճրագալոյց, Ս. Ծնունդ եւ Մեռելոց):
- 2.- Յունուար 13 (Տօն Անուանակոչութեան):
- 3.- Բուն Բարեկենդանի Կիրակիէն (27 Փետրուար) մինչեւ Ս. Յարութեան տօնին Երեւշաբթին (19 Ապրիլ):
- 4.- Վարդավառի Կիրակի եւ Երկուշաբթի՝ Մեռելոց (24-25 Յուլիս):
- 5.- Ս. Աստուածածնայ Վերափոխման Կիրակի եւ Երկուշաբթի՝ Մեռելոց (14-15 Օգոստոս):
- 6.- Խաչվերացի Կիրակի եւ Երկուշաբթի՝ Մեռելոց (11-12 Սեպտեմբեր):

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ալէ.	Ալէլուի
Աղթ.	Աղթի
Աղց.	Աղցի (աղուհացից մի' ասեր)
Ապշ.	Ապաշխարութեան
Թագ. յաւ.	Թագաւոր յաւիտեան
Ժմտ.	Ժամամուտ
Իսլ.	Իսլամաց
Լտ.	Լատինաց
Հետ.	Հետեւակ
Հմբ.	Համբարահ
Հնգ.	Հանգստեան
Հրց.	Հարց
Ճշ.	Ճշու
Մեծ.	Մեծացուցէ
Մես.	Մեսեդիի
Մնկ.	Մանկունի
Մրգ.	Մարգարէից

Մրտ. Մարտիրոսաց
Յար. Յարութեան
Յին. Յինանց
Յիս. Յիսնակի
Յն. Յունաց
Շրկ. Շարական
Ողր. Ողորմեա
Սդ. Սաղմոս
Սրբ. Սրբասացութիւն
Տրյ. Տէր յերկնից
Քրգ. Քարոզ
Օրհ. Օրհնութիւն
Ստղ. Ստեղի

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆՔ ԵՒ ՄԻՋՈՑՔ ՆՈՑԻՆ

ԿԱՂԱՆԴ	Շբ.	1	Յունվ.
Ս. Ծնունդ	Եջ.	6	Յունվ.
Միջոց ուտիք աուրք			32
Բարեկ. Առաջաւորի Պահոց	Կիր.	6	Փետր.
Ս. Սարգիս	Շբ.	12	Փետր.
ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ	Բշ.	14	Փետր.
Ս. Ղեւոնդեանք	Գշ.	22	Փետր.
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ	Եջ.	24	Փետր.
Բուն Բարեկենդան	Կիր.	27	Փետր.
Մուտն ի վիրապն	Շբ.	2	Ապրիլ
ՈՒԽՏԻ ՕՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ	Կիր.	3	Ապրիլ
ԾԱՂԿԱԶԱՐԴ	Կիր.	10	Ապրիլ
Ս. ԶԱՏԻԿ	Կիր.	17	Ապրիլ
Ս. ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ	Կիր.	24	Ապրիլ
Երեւումն Ս. Խաչի	Կիր.	15	Մայիս
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ	Եջ.	26	Մայիս
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ	Կիր.	5	Յունիս
Ելն ի վիրապէն	Շբ.	18	Յունիս
Տօն Ս. Էջմիածնի	Կիր.	19	Յունիս

Բարեկ. Ս. Լուսաւորչի	Կիր. 26	Յունիս
Գիւտ Նշխարաց	Շր. 2	Յուլիս
Բարեկ. Վարդավառի	Կիր. 17	Յուլիս
ՎԱՐԴԱՎԱՌ	Կիր. 24	Յուլիս
Միջոց ուտի՛ք շաբաթ		2
Բարեկ. Ս. Աստուածածնի	Կիր. 7	Օգոստ.
ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ	Կիր. 14	Օգոստ.
Միջոց ուտի՛ք շաբաթ		3
Բարեկ. Ս. Խաչի	Կիր. 4	Սեպտ.
ԽԱՉՎԵՐԱՑ	Կիր. 11	Սեպտ.
Բարեկ. Վարագայ Խաչի	Կիր. 18	Սեպտ.
Վարագայ Ս. Խաչ	Կիր. 25	Սեպտ.
Սրբոց Թարգմանչաց	Շր. 8	Հոկտ.
ԳԻԻՏ ԽԱՉԻ	Կիր. 23	Հոկտ.
Բարեկ. Յիսնակի	Կիր. 20	Նոյ.
Ս. Թադէոս եւ Բարթուղիմէոս	Շր. 3	Դեկտ.
Բարեկ. Ս. Յակոբայ	Կիր. 11	Դեկտ.
Ս. Յակոբ	Շր. 17	Դեկտ.
Ս. Ստեփանոս	Բշ. 26	Դեկտ.
Ս. Պետրոս եւ Պօղոս	Գշ. 27	Դեկտ.
Բարեկ. Ս. Ծննդեան	Եշ. 29	Դեկտ.

ՁԱՏԻԿԸ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

<i>Թուական</i>	<i>Նոր տոմար</i>	<i>Հին տոմար</i>
2023	9 Ապրիլ	16 Ապրիլ
2024	31 Մարտ	5 Մայիս
2025	20 Ապրիլ	20 Ապրիլ
2026	5 Ապրիլ	12 Ապրիլ
2027	28 Մարտ	2 Մայիս
2028	16 Ապրիլ	16 Ապրիլ
2029	1 Ապրիլ	8 Ապրիլ
2030	21 Ապրիլ	28 Ապրիլ
2031	13 Ապրիլ	13 Ապրիլ
2032	28 Մարտ	2 Մայիս
2033	17 Ապրիլ	24 Ապրիլ
2034	9 Ապրիլ	9 Ապրիլ



ՅՈՒՆՈՒԱՐ

31

- 1 **Ծբ. ԱԶ. Գ. օր Պահոց Ծննդեան: ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵՄՈՒՏ 2022 թուին Քրիստոսի (ըստ Նորոյ Տոմարին): Սրբոցն՝ Բարսղի հայրապետին, Եւ Եղբօր նորին Գրիգորի Նիւսացոյն, Սեղբեստրոսի Զոովմայ հայրապետին, Եւ արքայ Եփրեմի Խուրին ասորւոյ: Օրհ. գձ. «Որ համանման»(իւր սարօքն): Մնկ. դկ. ստեղի՝ «Լուսապայծառ»: Ժմտ. «Չհայրապե-** 27

Օ. 20

ՅՈՒՆՈՒԱՐ

Լ.

տականս»: Ճշ. շրկ. գձ. «Չա-
ռաջնորդս»: Յմբ. աձ. «Սուրբ Ես
Տեր» եւ «Երկնաքաղաքացին»:
Ճշ. ընթ. (Առ 11.2-11: Ես 4.2-6:
Կղ 1.21-29: Յհ 10.11-16):

Հայկական տոմարաւ՝ Քաղոցի 11
Լատինաց՝ տօն Անուանակոչութեան
Յունաց՝ Ս. Բարսղի հայրապետին

Իսլամական տոմարաւ՝
Ճեմատ-էլ-սուլայ, 4 օր

2 ✠ Կիր. ԱԿ. 2. Յիսնակի: Դ. օր 28

Պահոց Ծննդեան: Յրց. յար. դձ.
Ե. «Միածին Որդի Աստուծոյ»:
Յմբ. յար. Ակ. դ. «Յրաշալի գյա-
րութիւն» (ցվերջն): Ճշ. ընթ. (Ես
51.15-52: Եբր 13.18-25: Ղկ
22.24-30):



Ծնունդ լուսնի
Ջինախանն անձրեւ

3 **Բ2. Բ2. Ե. օր Պահոց Ծննդեան:** 29

Հրց. ապշ. դկ. գ. աղց. «Աստուած հարցն մերոց»: Մնկ. եւ Հմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Եբր 10.1-18: Ղկ 20.9-18):

4 **Գ2. ԲԿ. 2. օր Պահոց Ծննդեան:** 30

Հրց. ապշ. ած. դ. աղց. «Երգէին մանկունքն»: Մնկ. եւ Հմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Եբր 12.5-17: Ղկ 20.41-21.4):

5 **✠ Դ2. Գ2. ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾԸ-ՆԸՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏ-ՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:** 1

Չկնի «Ռահ գործեալ»ին երգ՝ «Ձայնիւ առ քեզ»: Օրհ. բծ. «Ուրախացիր Սրբուհի» (յատեանն): Ալէ. ճրագալուցի՝ «Առաքեաց զբան իւր»:

Հրց. դձ. «Որ դասուց»: Մեծ. դձ. «Ծագումն հրաշալի» (զՄանկունքն): Զրգ. «Փառաւորեսցուք»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Սղ. ՀԱ. «Իջցէ որպէս զանձրել», Աւետարան, «Էական բանն», «Խընդրեսցուք», «Կեցո», Աղթ. «Աստուած մշտնջենաւոր» (Տե՛ս ի կարգի Արեւագալին):

Յերեկոյին, ծածկեալ ունելով զսեղանն, ասասցեն զերիս «Ողորմեա»յսն եւ ընթեռնուցուն զԱւետարանսն եւ ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Մես. «Տեր ասաց ցիս»: Զրգ. «Ասասցուք»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Հմբ. բձ. ստեղի՝ «Անկանիմք» (յատեանն, ի ծունկս անկեալ): «Հայր գթած» եւ ապա ընթեռնուցուն զընթերցուածսն: Ժմտ. «Աստուածածին անհա-

րըսնացեալ»: Ճշ. շրկ. գձ. «Չանճառելի լուսոյ»: «Ս. Աստուած որ ծնար եւ յայտնեցար»: Սրբ. «Բազմութիւնք» (Է յայսմ ութ աւուրս):

Չկնի պատարագի՝ նախատօնակ: Շրկ. դկ. «Խորհուրդ մեծ» (իւր սարօքն): Զրգ. «Ս. զԱստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տէր»: **Նաւակատիք**: Ճշ. ընթ. (Տիտ 2.11-15: Մտ 2.1-12):

Իսլամական տոմարաւ՝
Ճեմատ-էլ-սանի, 29 օր

✠ ԵՂ. ԳԿ. ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱ-ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Չկնի «Ճանապարհ մոլորելոց»ին երգ՝ «Կուսածին մարդացեալ»: Օրհ. դկ. «Խորհուրդ մեծ»(իւր սարօքն, յատ-

եանն): Զրգ. գձ. «Անսկիզբն» (ի խորանն): Սոյնպէս եւ ի Տէր յերկնիցին զգեստաւորեալք ամենեքեան՝ եկեցեն յատեանն, եւ յաւարտին ընթեռնուցուն Աւետարան ի սեղանն: Չ«Փառք ՚ի բարձունս»ն մինչեւ ի կեսն ասացեն եւ ապա զմնացորդ Աւետարանն կարդացեն: Ապա զմնացեալն «Փառք ՚ի բարձունս»ին երգեսցեն: Քրգ. «Մայր սուրբ»: «Ս. Աստուած, որ ծնար եւ յայտնեցար»: Ապա ասացեն զշարականս եւ ընթեռնուցուն զչորեսին Աւետարանս: Ա. շրկ. դկ. «Խորհուրդ մեծ»: Բ. շրկ. դկ. «Այսօր ցնծան»: Գ. շրկ. դկ. «Այսօր Բանն ի Զօրէ»: Դ. շրկ. դկ. «Ի Զօրէ ծագեցար»: Ապա Սղ. ճԹ. «Ի վայելչութիւն»: Չկնի Աւետարանին՝ «Խաւարն անգոյ»: Քրգ. «Խնդրեսցուք», «Կե-

ցո»: Աղթ. «Քու՛մ ամենազօր եւ հրաշալի ծննդեանդ եւ յայտնութեանդ»: Ժմտ. «Աստուածածին գրեգ խոստովանեալ»: Ճշ. շրկ. գձ. «Սուրբ զԱստուածածինն»:

Յաւարտ Ս. Պատարագի՛ Կարգ Ջրօրհնեաց եւ նախատօնակ: Շրկ. ակ. «Արեգականն արդարութեան» (սարօքն):

Յերեկոյին՝ Մես. «Իջցէ որպէս»: Զրգ. «Մայր սուրբ»: Յմբ. դկ. «Այսօր Բանն ի Զօրե» եւ «Լոյս ի լուսոյ»: Չկնի «Յայր գթած»ին, միաբան ելցեն յատեանն հաշիւ եւ Աւետարանաւ, ինկօք եւ մոմեղիսօք եւ զառաջիկայ աւուր Զարցն (իւր սարօքն) երգեսցեն: Զրգ. «Ս. զԱստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տէր»: **(Այսպէս ութ օր նախատօնակ առնել)**: Ճշ. ընթ. (Տիտ 2.11-15: Մտ 1.18-25):

Միջոց ուսիքն երեսուն եւ երկու օր է
Յն. եւ Լտ. Մկրտութիւն Տեառն

7 ✠ Ուր. ԴԶ. Բ. օր Յայտնութեան: 3

ՅԻՇԱՏԱԿ ՍԵՌԵԼՈՅ: Չկնի «Ժողովեալքս ի հրաժարումն» ին երգ՝ «Չեակիցդ Զօր»: Օրհ. դկ. «Այսօր Բանն ի Զօրէ» (իւր սարօքն): Չկնի «Ս. Աստուած» ին Սղ. ճԹ. «Ի վայելչութիւն»: Չկնի Աւետարանին՝ «Ճառագայթեալ բանն» եւ ապա երգ՝ «Ծածկեալ խորհուրդն»: **(Ի միւս աւուրսն եւս զԱրարչութեան երգն ասա ըստ պատշաճի):** Զրգ. «Խնդրեսցուք»: Աղթ. «Զում ամենագօր»: Զմբ. գկ. «Էակից Զօր» (2 պատկեր): Ճշ. ընթ. (Գրծ 6.8-8.2: Յի 12.24-26):

8 Ըբ. ԴԿ. Գ. օր Յայտնութեան: 4

Օրհ. գկ. «Էակից Զօր» (իւր սա-

րօքն): Յմբ. գձ. «Այսօր Գաբրիէլ»: Ճշ. ընթ. (Եբր 1.1-12: Մտ 2.13-23):

9 ✠ **Կիր. ԱԶ. Դ. օր Յայտնութեան:** 5

Օրհ. գձ. «Այսօր Գաբրիէլ» (իւր սարօքն): Յմբ. գձ. «Այսօր որ յաթոռ»: Ճշ. ընթ. (Գղ 4.1-7: Ղկ 1.26-38):

Հանդիսաւոր հոգեհանգիստ վասն հոգւոցն Չաթալպաշեան Գէորգի եւ Արշակունհիի՝ բարերարացն Կաթողիկոսարանիս Վեհարանի: Այլեւ հոգւոցն Գրիգորի եւ Փերուզի՝ ծնողաց Չաթալպաշեան Գէորգի եւ հոգւոցն Կարապետի եւ Սրբունհիի՝ ծնողած Չաթալպաշեան Արշակունհիի եւ համայն ննջեցելոց նոցին: Նաեւ ծնողացն Պիքֆայայի Սուրբ Աստուածածին Վանքի Վեհարանի բարերարացն

*Գառնիկ Եազուպեանի, Աւետիսի
եւ Պերճանոյշի եւ Համայն ննջեցե-
լոցն Եազուպեան գերդաստանի:*



Առաջին քառորդ լուսնի
Ստոնամանիք

- | | | |
|----|--|---|
| 10 | ԲՁ. ԱԿ. Ե. օր Յայտնութեան: | 6 |
| | Օրհ. գձ. «Այսօր որ յաթոռ» (իւր սարօքն): Զմբ. գձ. «Անսկզբնական տեսիլ»: Ճշ. ընթ. (Եբր 12.18-27: Ղկ 1.39-56): | |
| 11 | ԳՁ. ԲՁ. 2. օր Յայտնութեան: | 7 |
| | Օրհ. գձ. «Անսկզբնական տեսիլ» (իւր սարօքն): Զմբ. բձ. «Անեղանելի բնութիւն»: Ճշ. ընթ. (Ա.Թս 4.13-18: Յհ 11.1-46): | |
| 12 | ԴՁ. ԲԿ. Է. օր Յայտնութեան: | 8 |
| | Օրհ. բձ. «Անեղանելի բնութիւն» (իւր սարօքն): Զմբ. դձ. «Լոյս ի լուսոյ» (յատեանն): Նախատօ- | |

նակ՝ Յրց. ած. «Տնօրինեցաւ»
(իւր սարօքն): Բրգ. «Ս. գԱստ-
ուածածինն»: «Կեցո», «Ընկալ
Տեր»: Ճշ. ընթ. (Յռ 1.1-7: Ղկ 2.1-7):

13 ✠ **ԵՂ. ԳՁ. Ը. օր Յայտնութեան:** 9

**ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍ-
ՏՈՍԻ:** Չկնի «Ռահ գործեալ»ին
երգ՝ «Չեակիցդ Յօր»: Օրհ. դծ.
«Լոյս ի լուսոյ»(յատեանն, սա-
րօքն): Չ«Փառք ի բարձունս»ն
ասել որպէս ի գիշերի Ծննդեան:
Ժմտ. «Աղաչեմք զքեզ»: Յմբ. դծ.
«Լոյս ի լուսոյ» (3 պատկեր): Ճշ.
ընթ. (Կդ 2.8-15: Ղկ 2.21):

14 **Ուր. ԳԿ. Պահք:** Յրց. հնգ. ակ. 10

«Գոհաբանեմք զքեզ»: Մնկ. Խաչի
գկ. գ. «Ո՛վ պահապան որ ծագե-
ցար»: Յմբ. ապշ. ՚ի ձայնէն: Ապա
նախատօնակ արա: Շրկ. ակ.
«Արեգականն արդարութեան»

(իւր սարօքն): Զրգ. «Ս. ճգնաւորօքն»: Աղթ. «Որ ընտրեցեր»: Ճշ. ընթ. (Ա.ՏՄ 4.1-12: Յհ 2.23-3.12):

15 **Շք. ԴԶ. Տօն ծննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին:** Օրհ. 11

ակ. «Արեգականն արդարութեան» (իւր սարօքն): Թագ. յաւ. «Այսօր դասք»: Առաւօտու երգ՝ «Դու մանուկ» (Տե՛ս ի ճաշու Ալէլուեայսն): Զրգ. «Աստուած մեծ»: Մնկ. դկ. «Մարգարեից գերագոյն»: Չկնի «Տէրն յետ ստեղծման»ին երգ՝ «Ժառանգին Հօր» եւ «Ի Հօրէ լոյս ծագեցար»: Ժմտ. «Չյառաջընթացութիւն քո»: Հմբ. աձ. «Սուրբ ես Տէր» եւ «Երկնաքաղաքացին»: Ճշ. ընթ. (Առ 8.4-11: Մղ 4.5-7: Ես 40.3-5: Գրծ 13.25-33: Ղկ 1.57-80):

16 **✠ Կիր. ԴԿ. Ա. գկնի Աստուածա- 12**
յայտնութեան: Հրց. յար. դձ. գ.

«Ծագումն Միածնի Որդւոյ»: Յմբ.
յար. դկ. գ. «Յրեշտակ քո Տէր»
(ցվերջն): Ճշ. ընթ. (Ես 54.1-14:
Ա.Տմ 1.1-11: Յհ 2.1-11):

*Հանդիսաւոր հոգեհանգիստ
վասն հոգւոցն Մելքոնեան հարա-
գատաց՝ Կարապետի եւ Գրիգորի:*

17 **Բշ. ԱՁ. Սրբոցն՝ Պետրոսի հայ- 13**
րապետին, Վլասայ եպիսկոպո-
սին եւ Աբիսողոմայ սարկաւա-
գին: Օրհ. մրտ. 'ի ձայնէն: Յրց.
մրտ. դձ. գ. «Որք հաղորդեցան»:
Մնկ. եւ Յմբ. գձ. «Մանկունք
նոր»: Ժմտ. «Չհայրապետա-
կանն»: Ճշ. շրկ. դձ. «Այսօր երկ-
նայնոցն» (հայրապետաց): Ճշ.
ընթ. (Իմստ 5. 1-8: Բրք 3.31-4.4:
Յռ 8.28-39: Յհ 10.11-16):



Լրումն լուսնի

Զինախանն անձրեւ

- 18 **ԳՁ. ԱԿ. Սրբոց ճգնաւորացն** 14
Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ
եւ Ոնոփրիոսի: Օրհ. աձ. «Որ
գերազանցեալ» (յոզնակի ասա,
իւր սարօքն): Ժմտ. «Ճգնաւորք
Զրիստոսի»: Ճշ. շրկ. զ«Ողորմ-
եա»յն ասա՝ «Որ անմարմնա-
կան»: Մնկ. եւ Յմբ. բձ. «Պար-
ծանք եկեղեցւոյ»: Ճշ. ընթ. (Առ
21.15-24: Ես 19.19-21: Եբր 11.
32-40: Յհ 9.39-10.10):
- 19 **ԴՁ. ԲՁ. Պահք:** Զրց. ապշ. ալ. ե. 15
աղց. «Փառաւորեալ յաւիտեան»:
Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ.
ընթ. (Ա.Տմ 2.8-3.13: Յհ 2.12-22):
- 20 **ԵՁ. ԲԿ. Սրբոցն՝ Թեոդոսի Թա-** 16
գաւորին եւ Մանկանցն Եփե-
սոսի: Օրհ. ալ. «Որ գերկնաւոր»
(իւր սարօքն): Մեծ. աձ. «Երա-
նելի աստուածասեր»: Ժմտ. «Որ-
պէս յետ աստուածասեր» (ա.):

Ճշ. շրկ. բձ. «Աստուած Փրկիչ մեր»: Յմբ. աձ. «Սուրբ ես Տէր» եւ «Երկնաքաղաքացին»: Ճշ. ընթ. (Իմստ 6.2-10: Ես 45.1-2: Ա.Տմ 2.1-7: Ղկ 7.1-10):

- 21 **Ուր. ԳՁ. Պահք:** Յրց. հնգ. բձ. 17
 «Որ թագաւորդ ես»: Մնկ. Խաչի գձ. ե. «Յրաշափառ տեսութիւն»: Յմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Ա.Տմ 2.3-14: Յհ 5.31-47):

Հայկական տոմարաւ՝

Արաց, 30 օր

⊗ **Ի Զրիսն**

Միջին ամիս ձմեռնային

- 22 **Շբ. ԳԿ. Սրբոց հայրապետացն՝** 18
Աթանասի եւ Կիրղի: Օրհ. ալ. «Որք զարդարեցին»: Յրց. գձ. «Որ զանչափ քո»: Մնկ. գձ. «Մանկունք նոր»: Ժմտ. «Չհայրապետականն»: Ճշ. շրկ. դձ.

«Այսօր երկնայնոցն» (հայրապետաց): Յմբ. ած. «Սուրբ ես Տեր» եւ «Երկնաքաղաքացին»: Ճշ ընթ. (Առ 11.2.11: Ես 61.3-7: Եբր 13.7-9: Յհ 16.33-17.8):

23 ✠ **Կիր. ԴՁ. Բ. գկնի Աստուածա-** 19

յայտնութեան: Յրց. յար. գծ. ե. «Արարիչդ արարածոց Զրիստոս»: Յմբ. յար. դծ. ե. «Չյարութիւն Աստուածորդւոյն»(ցվերջն): Ճշ. ընթ. (Ես 58.13-59.7: Բ.Տմ 4.12-5.10: Յհ 3.13-21):

24 **Բշ. ԴԿ. Սրբոցն՝ Կիրակոսի եւ** 20

մօրն Յուդիտայի: Եւ վկայիցն՝ Գորդիոսի, Պօղիքոսի եւ Գրիգորիսի: Օրհ. մրտ. ՚ի ձայնէն: Յրց. մրտ. ալ. բ. «Որ բարձրեալդ ես»: Մնկ. բկ. «Յարմատոց բարեաց»: Ժմտ. «Ի տաճարի»: Յմբ. բկ. «Վարդագոյն»: Ճշ. ընթ. (Առ 14.1-6: Չք 8.4-5: Ես 60.8-9: Եբր

2.14-18: Ղկ 21.12-19):

- 25 **Գ2. Ա2. Սրբոյն՝ Վահանայ Գողթ-** 21
նացւոյն: Եւ սրբոյն Եւզինեայ
կուսին եւ հօրն նորա Փիլիպ-
պոսի եւ մօրն Կղօդեայ եւ եր-
կուց եղբարցն՝ Սերգեայ եւ Ապի-
տոնի եւ երկուց ներքինեացն:
 Օրհ. մրտ. 'ի ձայնէն: Զրց. մրտ.
 բձ. ա. «Անոխակալ եւ բարե-
 գուլթ»: Մնկ. եւ Զմբ. բձ. ստեղի՝
 «Չարմանալի է»: Ժմտ. «Ի տա-
 ճարի»: Ճշ. ընթ. (Առ 7.1-7: Եզ
 12.17-19: Զռ 8.12-27: Ղկ 12.32-
 40):



Վերջին քառորդ լուսնի

Ձիւն եւ փուֆ

- 26 **Դ2. ԱԿ. Պահք:** Զրց. ապշ. բձ. բ. 22
 աղց. «Որ ապրեցուցեր»: Մնկ. եւ
 Զմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ.

(Ա.ՏՄ 5.17-6.5: Յհ 3.22-36):

- 27 **ԵՂ. ԲՁ. Սրբոց վկայիցն՝ Ելզի- 23**
նեսի, Մակարիոսի, Վաղերիոսի,
Կանդիտոսի եւ Ակիւղասայ: Օրհ.
 մրտ. 'ի ձայնէն: Զրց. մրտ. բձ. բ.
 «Ընդ սուրբս քո»: Մնկ. եւ Զմբ.
 մրտ. ի ձայնէն: Ժմտ. «Ի տա-
 ճարի»: Ճշ. ընթ. (Սփ 3.19-20:
 Բ.Կր 10.3-6: Մտ 10.23-33):
- 28 **Ուր. ԲԿ. Պահք:** Զրց. հնգ. բկ. 24
 «Արարիչ եւ մարդասեր»: Մնկ.
 Խաչի բկ. բ. «Խաչն կենարար»:
 Զմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ.
 (Բ.ՏՄ 3.1-7: Յհ 6.64-72):
- 29 **Շբ. ԳՁ. Սրբոյն Գրիգորի Աստ- 25**
ուածաբանին: Օրհ. ակ. «Որք
 զարդարեցին»: Զրց. դձ. «Սքան-
 չելագործ»: Մնկ. բձ. «Որ լուսով»:
 Ժմտ. «Չհայրապետականն»: Ճշ.
 շրկ. դձ. «Այսօր երկնայնոցն»
 (հայրապետաց): Զմբ. աձ. «Սուրբ

Ես Տեր» եւ «Երկնաքաղաքացի»:
Ճշ. ընթ. (Առ 8.33-36: Ովս 10.12:
Ամս 5.10-14: Գրծ 20.25-32: Յհ
10.11-16):

30 ✠ **Կիր. ԳԿ. Գ. գկնի Աստուածա- 26**

յայտնութեան: Զրց. յար. գկ. գ.
«Այսօր գե՛նաւ մեզ պատարագ»:
Զմբ. յար. գկ. ե. «Տեսիլ փայլակ-
նաձեւ գուարթնոյն» (ցվերջն): Ճշ.
ընթ. (Ես 62.1-12: Բ.Տմ 2.15-19:
Յհ 6.39-47):

31 **Բշ. ԴՁ. Սրբոց Մակաբայեցոցն՝ 27**

**Եղիազարու քահանային, եւ Շա-
մունեայ, եւ Եօթն որդւոց Լորին:**
Օրհ. մրտ. 'ի ձայնէն: Զրց. մրտ.
բկ. ա. «Օրհնեմք զքեզ Տեր»: Մկ.
եւ Զմբ. մրտ. 'ի ձայնէն: Ժմտ. «Ի
տաճարի»: Ճշ. ընթ. (Առ 29.2-7:
Բ.Մկ 6.18-7.42: Եբր 11.32-40: Մտ
5.17-20):



ՓԵՏՐՈՒԱՐ

28

- 1 **ԳՁ. ԴԿ.** Սրբոց երկուտասան մար- 28
գարեիցն՝ Ովսեայ, Ամովսայ, Մի-
քիայ, Յովելեայ, Աբդիու, Նաու-
մայ, Ամբակումայ, Յովնանու,
Սոփոնեայ, Անգեայ, Չաքարիայ,
եւ Մաղաքիայ: Օրհ. ալ. «Որ
զաստուածային» (իւր սարօքն):
Մեծ. դձ. «Որ ի բարձրութիւնս»:
Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: ԾՁ.
շրկ. աձ. «Ճառագայթ»: Յմբ. դկ.

«Այսօր ցնծայ»: ԾՁ. ընթ. (Ովս 10.11-12: Ամս 5.10-14: Մք 7.7-9: Յվլ 2.12-13: Աբդ 1.20-21: Յվն 4.2: Նհ 1-7-9: Ամբ 1.1-3: Սփ 1.7-8: Անգ 2.7-10: Չք 7.9-13: Մղ 1.4-6: Հռ 11.2-5: Ղկ 13.31-35):



Ծնունդ լուսնի

Մառախլապատ եւ ձիւնախառն
անձրեւ

- 2 **ՂՁ. ԱԶ. Պահք:** Հրց. ապշ. բձ. գ. 29
աղց. «Որ ահաւոր քոյով»: Մնկ.
եւ Հմբ. ապշ. 'ի ձայնէն: ԾՁ. ընթ.
(Ա.Տմ 2.20-2.26: Յհ 6.48-55):

Յն. եւ Լտ.

Տեառնընդառաջ

- 3 **ԵՁ. ԱԿ. Սրբոցն՝ Սոփիայ, եւ 1**
երից դստերացն՝ Պիստիսի, Ել-
պիսի եւ Ագապի: Օրհ. մրտ. 'ի

ձայնէն: Զրց. մրտ. բկ. բ. «Որք 'ի մարտի անօրինեցան»: Մնկ. եւ Զմբ. մրտ. 'ի ձայնէն: Ժմտ. «Յարսնացեալք»: Ճշ. ընթ. (Առ 11.30-12.4: Ովս 14.6-9: Բ.Կր 4.6-14: Ղկ 12.2-10):

Իսլամական տոմարաւ՝

Րէճէպ, 30 օր

- | | | |
|---|--|---|
| 4 | <p>Ուր. ԲՁ. Պահք: Զրց. հնգ. գձ. «Օրհնեմք զեք Զայր»: Մնկ. Խաչի բձ. բ. «Այսօր խնդրի պատուական»: Զմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Ա.Կր 11.1-16: Մր 1.35-45):</p> | 2 |
| 5 | <p>Շբ. ԲԿ. Սրբոցն որդւոց եւ թռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի: Օրհ. դկ. «Արմատ ճշմարիտ» (Տե՛ս բձ. «Ով երջանիկ»): Զրց. ալ. «Որ զլոյս աստ-</p> | 3 |


ուածային» (իւր սարօքն): Մկ.
դկ. «Աստուածային հաւատոյ»:
Ժմտ. «Չհայրապետական»: Ճշ.
շրկ. գկ. «Յովիւ քաջ»: Յմբ. ած.
«Սուրբ եւ Տէր» եւ «Երկնաքա-
ղաքացի»: Ճշ. ընթ. (Եր 17.7-8:
Ես 61.3-7: Բ.Տմ 1.6-14: Ղկ 11.29-
32):

6 ✠ **Կիր. ԳՁ. Բարեկենդան Առա- 4**
ջաւորաց Պահոց: Յրց. յար. դձ.
Է. «Փառաւորելով զանուն քո»:
Մեծ. դձ. «Ուրախացիր Աստուա-
ծածին վերօրհնեալ»: Յմբ. յար.
գձ. ե. «Ի ձայն ահեղ յարութեան
քո»(ցվերջն): Ճշ. ընթ. (Ես 61.10-
62.9: Բ.Տմ 2.15-26: Յհ 6.15-21):

7 **Բշ. ԳԿ. Ա. օր Առաջաւորի Պա- 5**
հոց: Յրց. ապշ. բկ. ա. աղց.
«Յարցն մերոց օրհնեալ»: Մկ.
եւ Յմբ. ապշ. 'ի ձայնէն: Ի չորս
աւուրսն այս պահոց, ի ճաշուն

զերիս «Ողորմեա»յսն միայն
ասա, ապա զ«Յոգւոց» եւ ոչ այլ
ինչ, զի ընթեր ցմունք ոչ գոն:
Իսկ յերեկոյսն ըստ կարգի
պահոց:

- 8 **ԳԶ. ԴԶ. Բ. օր Առաջաւորի Պահոց:** Զրց. ապշ. բկ. դ. աղց. «Տէր Աստուած հարցն»: Մնկ. եւ Զմբ. ապշ. 'ի ձայնէն: 6

 Առաջին քառորդ լուսնի
խառնակ եւ ցուրտ օդ

- 9 **ԴԶ. ԴԿ. Գ. օր Առաջաւորի Պահոց:** Զրց. ապշ. բկ. ե. աղց. «Մանկանցն զձայնն»: Մնկ. եւ Զմբ. ապշ. 'ի ձայնէն: 7

Մարտիփնեբու՝ տօն Ս. Մարտի

- 10 **Ճ ԵԶ. ԱԶ. Դ. օր Առաջաւորի Պահոց:** Զրց. ապշ. գձ. գ. աղց. 8

«Օրհնեալ ես Տէր եւ փառաւորեալ»: Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ձայնէն:

11 **Ուր. ԱԿ. Ե. օր Առաջաւորի Պահոց: (Յիշատակ Յովնանու Մարգարէին):** 9

Օրհ. ապշ. 'ի ձայնէն: Յրց. դկ. ստեղի՝ «Որ զանճառելի» (իւր սարօքն): Մեծ. «Մարգարէն 'ի փորոյ կիտին»: Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: Գիրք Յովնանու մարգարէին եւ ապա «Յոգւոց»: Ծշ. ընթ. (Յվն 1.1-4.11):

12 **Շբ. ԲԶ. Սրբոցն՝ Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն:** 10

Օրհ. ակ. «Ամենասուրբ Երրորդութեան»: Յրց. մրտ. գկ. «Չինուորութիւնք»: Մնկ. աձ. «Չինաւորն Զրիստոսի»: Ժմտ. «Չօրական եւ վկայ»: Յմբ. աձ.

«Սուրբ եւ Տէր» եւ «Երկնաքաղաքացին»: Ճշ. ընթ. (Առ 3.13-17: Ես 41.1-3: Եփ 6.10-17: Ղկ 21.10-19):

13 ✠ **Կիր. ԲԿ.:** Հրց. յար. ղկ. ե. 11
 «Անսկիզբն բանդ որ յանճառ»: Մեծ. ղկ. «Աստուածածին պայծառ»:

Յերեկոյին՝ «Լոյս գուարթ» (ձայնիւ): Մես. Գալստեան՝ «Օրհնեալ եկեալ»: Զրգ. «Ասասցուք»: «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Հմբ. աճ. «Մարմնացեալդ ի կուսէն»: Աղթ. «Հայր գթած»: Ապա նախատօնակ արա: Շրկ. դձ. «Այսօր անսկզբնական» (սարօքն): Ապա գիրք, Ալէ. «Օրհնեալ որ գալոց», Աւետ.: Անդաստան, «Ս. Խաչիւս», «Պահպանեալ»: Ապա լուցցեն զհուրն եւ ասասցեն զտաղն՝ «Զրիստոս

փառաց թագաւոր»: Քրգ. «Խընդ-րեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: Ճշ. ընթ. Ճշ. ընթ. (Ես 63.7-19: Բ.Տմ 3.1-12: Յի 6.22-38: **Նախատօնակի Աւետարան.**- Ղկ 2.22-40):

Հանդիսաւոր հոգեհանգիստ վասն հոգւոցն Գնաճեան Սարգիսի եւ Մարիանոսի՝ բարերարացն Կաթողիկոսարանիս Մայր Տաճարին:

14

✠ ԲՁ. ԳՁ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՁ: **Soln քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի՝ ի տաճարն:** Ի գիշերին հսկումն է եւ դիցեն զսրբութիւնն ի վերայ բազմոցին: Չկնի «Ռահ գործեալ»ին՝ երգ «Ըստ օրինացն Մովսիսի»: Ապա ամենեքեան զգեստաւորեալք եկեսցեն յատեանն եւ ասացեն Յետ. շրկ. աճ. «Մարմնացեալդ ի Կու-

12

սեն»: Օրհ. դձ. «Այսօր անսկզբ-
նական»: Ալելուք Տեառնընդա-
ռաջի: Ապա կարդացեն զչորե-
սին Աւետարանսն ի չորիս ան-
կիւսս եկեղեցւոյ: Ա. շրկ. աձ.
«Մարմնացեալդ»: Բ. շրկ. դձ.
«Այսօր անսկզբնական»: Գ. շրկ.
դձ. «Լոյս ի լուսոյ»: Դ. շրկ. դկ.
«Այսօր ի տաճարն»: Ապա դարձ-
եալ շրկ. բկ. «Ի գալստեան
Տեառն»: Ապա եկեալ յատեանն
ասացեն զհարցն(հւր սարօքն):
Քրգ. «Մայր սուրբ»: «Ս. Աստ-
ուած որ եկիր եւ գալոց ես»: Եւ
ընթեռնուցուն զերեկոյեան Գիր-
քըն եւ զԱւետարանն: «Էական
բանն»: «Խնդր.», «Կեցո», «Քում
ամենագօր գալստեանդ»: Ժմտ.
«Ծերունիս»(զերկուսն ի միասին
ասա): Սրբ. «Բազմութիւնք»:
Յերեկոյին՝ Մես. «Մեծացուցե»:

Քրգ. «Մայր սուրբ»: Յմբ. դկ.
«Այսօր ի տաճարն» (2 պատկեր):
Ճշ. ընթ. (Ես 24.21-25.8: Գրծ
7.46-50: Գղ 4.1-7: Ղկ 2.41-52):

15 **Գ2. ԳԿ. Սրբոց Ատոյմեանց գօ-** 13

րավարացն: Եւ սրբոց Սուքիաս-
եանց վկայիցն: Օրհ. մրտ. 'ի
ձայնէն: Յրց. մրտ. գկ. «Չիսուո-
րութիւնք»: Մսկ. եւ Յմբ. ալ.
«Աղաչեմք զքեզ»: Ժմտ. մրտ. «Ի
տաճարի»: Ճշ. շրկ. մրտ. 'ի ձայ-
նէն: Ճշ. ընթ. (Իմստ 6.12-21: Ես
18.7-19.7: Բ.Կր 4.10-5.5: Յհ 16.
1-5):

16 **Դ2. ԴԶ. Պահք:** Յրց. հնգ. գձ. 14

«Օրհնեմք զքեզ»: Մսկ. եւ Յմբ.
ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Բ.Տմ
3.16-4.8: Յհ 7.1-13):



Լրումն լուսնի

Ցուրտ, ամպամած եւ անձրեւաբեր

Օ. 48	ՓԵՏՐՈՒԱՐ	Լ.
17	ԵՉ. ԴԿ. Սրբոց Ոսկեանց քահանայիցն: Օրհ. մրտ. 'ի ձայնէն: Զրց. մրտ. ալ. ա. «Սուրբ Աստուած արարիչ»: Մկ. եւ Զմբ. գծ. «Որք արժանաւորեցայք»: Ժմտ. «Չհայրապետականն»: ԾՉ. շրկ. մրտ. 'ի ձայնէն: ԾՉ. ընթ. (Առ 24.1-12: Եր 30.18-22: Բ.Տմ 3.10-12: Մտ 5.1-12):	15
18	Ուր. ԱԶ. Պահք: Զրց. հնգ. դծ. «Որ փառօք հօր»: Մկ. Խաչի ած. «Յրաշակերտ եւ զօրեղ»: Զմբ. ապշ. 'ի ձայնէն: ԾՉ. ընթ. (Բ.Տմ 4.9-22: Յհ 7.14-23):	16
19	Շբ. ԱԿ. Սրբոյն Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ: Օրհ. դկ. «Արմատ ճշմարիտ»: Զրց. (Թռռանցն) ալ. «Որ զլոյս աստուածային» (իւր սարօքն): Մկ. դկ. «Որ յարմատոց»: ԾՉ. շրկ. գկ. «Յովիւ քաջ» (Լուսաւորչի ելն	17

'ի վիրապէն): Զմբ. ած. «Սուրբ
Ես Տէր» եւ «Երկնաքաղաքա-
ցիկ»: Ճշ. ընթ. (Իմստ 7.12-18:
Ես 61.3-7: Եբր 13.17-21: Յի
10.11-16):

20 ✠ **Կիր. ԲԶ.:** Զրց. յար. դկ. գ. «Որ 18
յահեղակերպ յաթոռ նստիս»:
Մեծ. դկ. «Աստուածածին մայր
լուսոյ»: Զմբ. յար. բձ. Ե. «Աքան-
չելի կանայքն աներկիւղ» (ցվեր-
ջըն): Ճշ. ընթ. (Ես 63.18-64.12:
Տիտ 1.1-11: Յի 7.37-52):

*Հանդիսաւոր հոգեհանգիստ
վասն հոգւոցն հանգուցեալ հայ-
րապետացն սրբոյ Աթոռոյս եւ
համայն միաբանից Ուխտին Մեծի
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-
թեան, ի յուշարձան-ղամբարանի
յանուն Տ. Տ. Զարեհայ Առաջնոյ
բազմերախտ Կաթողիկոսի Մեծի
Տանն Կիլիկիոյ:*

Հայկական տոմարաւ՝
Մեհեկան, 30 օր

⊗ Ի Զուկն

Վերջին ամիս ձմեռնային
Ջերմութիւն արեւու իջանէ յօդս

21 **Բ2. ԲԿ. Սրբոցն՝ Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիրղի եւ Բենիամինի սարկաւազացն, եւ վկայիցն Աբղմսեհի, Որմզդանայ եւ Սայենի:** Օրհ. մրտ. 'ի ձայնէն: Զրց. մրտ. գձ. ա. «Որք գտանջանս յանօրինաց»: Մնկ. եւ Զմբ. մրտ. 'ի ձայնէն:

Յերեկոյին նախատօնակ արա: Շրկ. դձ. «Որ յառաջագոյն» (սարօքն): Ճշ. ընթ. (Չք 8.1-3: Զռ 8. 28-39: Յհ 15.17-21):

22 ✕ **Գ2. ԳԶ. Սրբոց Ղեւոնդեանց** 20

քահանայիցն: Օրհ. դձ. «Որ յառաջագոյն» (սարօքն): (Մանկունքն եւ Համբարձին յատեանն ասա): Չկնի «Էական»ին երգ՝ «Գոչեմք առ ձեզ»: Ժմտ. «Յաշխարհական»: Ճշ. ընթ. (Իմաստ 5.16-23: Ես 35.1-2, 61.6-7: Ա.Պտ 1.3-9: Ղկ 12.4-10):

- 23 **ԴՁ. ԳԿ. Պահք:** Հրց. հնգ. դձ. «Որ 21
փառօք Հօր»: Մնկ. եւ Հմբ. ապշ.
'ի ձայնէն: Յերեկոյին նախատօ-
նակ արա: Շրկ. դկ. «Նորահրաշ»
(իւր սարօքն): Ճշ. ընթ. (Տիտ
1.12-2.10: Յհ 8.12-20):



Վերջին քառորդ լուսնի
Խառնակ օդ, անձրեւի եւ ցուրտ

- 24 **✠ ԵՁ. ԴՁ. ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ 22
ՉՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ, հազար
երեսուն եւ վեց վկայիցն, որք**

Կատարեցան 'ի մեծի պատերազմին: Օրհ. դկ. «Նորահրաշ» (յատեանս), գ«Անճառելի»ն զհետն ասա: Թագ. յաւ. «Այսօր դասք»: Յրց. դկ. «Որ անդադար»: Մնկ. եւ Յմբ. դկ. ստեղի՝ «Արիացեալք»: Չկնի «Ճառագայթեալ»ին երգ՝ «Րամեալ զօրացն» եւ «Գոչեմք առ ձեզ»: Ժմտ. «Յաշխարհական»: Ճշ. շրկ. դկ. «Արեգակն արդարութեան»: Սրբ. «Վասն յիշատակի»: Ճշ. ընթ. (Իմստ 3.1-8: Ես 49.8-9: Եբր 12.1-7: Ղկ 6.20-26):

Տօն եկեղեցական եւ ազգային

25 **Ուր. ԴԿ. Պահք:** Յրց. հնգ. դկ. 23 «Յաւիտենից Աստուած»: Մնկ. Խաչի դկ. ա. «Այսօր նշան յաղթող»: Յմբ. ապշ. 'ի ձայնէն: Ճշ. ընթ. (Տիտ 3.1-15: Յհ 8.21-30):

26 **Շբ. ԱԶ. Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր եւ յիսուն հայրապետացն:** 24

Օրհ. գձ. «Այսօր սրբոց հայրապետացն» (իւր սարօքն): Մնկ. գձ. «Ով հրաշալի» եւ «Ի սուրբ Երրորդութենէն» (յատեանն): Յորժամ զՄանկունքն երգեն, ծածկեն զՍեղանն վարագուրաւ: Յասելն «Ի սուրբ Երրորդութենէն» բանան զվարագոյր եւ աւագ երեցն շուրջառաւ, Աւետարան ի ձեռին, ելանէ ի խորանն եւ ժամօրհնողն շուրջառաւ ինկարկէ առաջի Ս. Աւետարանին: Գան կանգնին առաջի Ս. Բեմին եւ համբուրեն ըզսուրբ Աւետարանն:

Յերեկոյին՝ «Լոյս զուարթ» (թիւ): «Ս. Աստուած որ խաչեցար»: Յմբ. դկ. «Բանն որ ընդ Յօր» (յատեանն, առանց շուրջառի, եւ վարագուրեն զսեղանսն):

Այսուհետեւ ոչ համբուրեցեն զԱւետարանս, նաեւ ոչ բարձրացուցեն ի «Յաւատամք»ին եւ ի «Կեցո»ին՝ ի տես ժողովրդեանս: 2«Լոյս զուարթ»ն ի թիւ ասասցեն ի տեղի մաղթանացն մինչեւ ի Ծաղկազարդն: Ի Շաբաթու երեկոյին «Յայր գթած» եւ «Աստ օրհնեցէք» ոչ գոն: Առանց շուրջառի եւ Աւետարանի «Ս. Խաչիւ», «Կեցո», «Պահպանեա»:

Յաւուրս Մեծի Պահոց Կիրակեցի մինչեւ ի Չատկի Կիրակէն, զկնի Օրհնութեան եւ Մեծացուցէ շարականաց, սարկալագն ի թիւ ասասցէ զքարոզսն: Զրգ. «Չուարճացեալքս» եւ առօթք «Ամենակեցոյց» ոչ գոն: Ի պահոցս Յանգստեան շարական, «Խորհուրդ խորին» եւ «Յայս յարկ նուիրանաց» ոչ գոն:

Ճաշու շարական զՕրհնութեան
առաջինն ասա, իսկ գլխինն
յերեկոյին՝ Յամբարձի: Ճաշու
Ալե. Սղմ. ՂԹ. «Աղաղակեցէք»
(լման): Ճշ. ընթ. (Եզ 3.16-19:
Բ.Կր 6.1-14: Մտ 12.22-32):

27 ✕ **Կիր. ԴԿ. Ա. Քառասնորդաց:** 25

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ: Չկնի «ըՉ-
քէն գոհանամք»ին գան յատ-
եանն եւ ասեն ի թիւ սաղմոս
«Օրհնեա անձն իմ»: Ապա դը-
պիրքն եղանակեն զԿանոնա-
գլուխն՝ «Օրհնեցից զքեզ»: Ի
տեղի Յանգստեան շարականի՝
«Այսօր անճառ» եւ «Տարածեալ»:
Սղ. Դ. «Նշանեցաւ», Աւետարան
Խաչելութեան, «Նորոգող»: Երգ՝
«Չարհուրեցան»: Օրհ. դկ. «Բա-
նըն որ ընդ Յօր» (իւր սարօքն):
Ալելուք Խաչի: Իւղաբերից Աւե-
տարան զԹաղմանն միայն կար-

դա: Չկնի՝ «Չամենայն աւուրս» (երիցս կրկնեա, գլետիսն բարձր): Ի գիշերին ասա ի թիւ: «Նորաստեղծեալ» (երկու տուն): Չկնի՝ «Կեցո» (առանց Աւետարանի): Ժմտ. «Առաջի պատուական»:

Յերեկոյին՝ յետ Յամբարձիի Քրգ. «Ս. Խաչիւս», «Կեցո», «Պահպանեա»: Ճշ. ընթ. (Ես 58.1-14: Յռ 13.11-14.25: Մտ 6.1-21):

*Հանդիսաւոր հոգեհանգիստ
վասն հոգւոցն Գայրգճեան Սի-
մոնի եւ Մաթիլտի՝ բարերարացն
Սրբոյ Աթոռոյս եւ համայն ննջե-
ցելոց նոցին: Նաեւ բարերարին
Կաթողիկոսարանիս Սարաֆեան
եւ Մուշեան գերդաստանաց նրն-
ջեցելոցն*

Լ.տ. Բուն Բարեկենդան
Ջերմութիւն արեւու իջանէ ի ջուրս

28 **ԲԶ. ԱԶ. Ա. օր Մեծի Պահոց:** 3րց. 26
ապշ. ած. ա. «Որ հայիս քաղց-
րութեամբ»:

Յայս երկուս աւուրս, կից ընդ
առաւօտեան ժամուս, գերիս «Ո-
ղորմեա»յսն ասա միայն, որպէս
ի հասարակ աւուրս: Չկնի Գիրք՝
«Յոգւոց»: Նոյնպէս եւ յերեկոյսն,
որպէս ի հասարակ աւուրս պա-
հոց, եւ ոչ այլ ինչ: Ճշ. ընթ. (Ես
1.16-20):

Լ.տ. Օր Մոխրոց



ՄԱՐՏ

31

- 1 **Գշ. ԱԿ. Բ. օր Մեծի Պահոց: Զրց. 27**
ապշ. աձ. բ. «Որ համագոյից»:
Ճշ. Ընթ. (Եզ 18.20-23):
- 2 **Դշ. ԲՁ. Գ. օր Մեծի Պահոց: Զրց. 28**
ապշ. աձ. գ. «Որ յամենայնի ես
կարող»:

Այսօր սկիզբն արա կատարել
զկարգ Ապաշխարութեան եւ
սկսեա զ«Տէր ամենակալ»ն յա-
ռաւօտուն եւ ի ճաշուն, եւ զԱրե-

լագալի շարականս: Նոյնպէս
 եւ ի ճաշուն՝ զմեծ քարոզսն եւ
 զաղօթսն եւ զ«Ողորմեա»յից
 երգսն, եւ զկնի «Խոնարհեցո» եւ
 «Ապրեցո»: Իսկ յերեկոյին զԽա-
 ղաղականն, զ«Նայեաց սիրով»ն
 եւ զ«Ի քէն հայցեմք»ն եւ ապա
 «Յոգւոց» եւ արձակին: (Պահոցս
 լուր աւուր կարգն այս է, մինչեւ
 ՚ի Ծաղկագարդն): Ճշ. ընթ. (Ելք
 1.1-2.10: Յվլ 1.14-20):



Ծնունդ լուսնի
 Ցուրտ, փոթորկալի եւ խոնաւ

Իսլ. Համբարձումն Մարգարէին
 (Միրաժ)

3 **ԵՉ. ԲԿ. Դ. օր Մեծի Պահոց:** Յրց. 29
 ապշ. ած. Ե. «Բարեբանեալ ես
 թագաւոր»: Ճշ. ընթ. (Յռ 6.3-14):

Օ. 60

ՄԱՐՏ

Լ.

4 **Ուր. ԳՁ. Ե. օր Մեծի Պահոց:** Հրց. 30
ապշ. աձ. գ. «Բարեբանեալ ես 'ի
յաւիտեան»: Ճշ. ընթ. (Բ.Օր 6.4-
7.10: Յոր 6.2-7.13: Ես 40.1-8):

5 **Շբ. ԳԿ. Զ. օր Մեծի Պահոց:** 1
Սրբոյն Թեոդորոսի զօրավարին:
Օրհ. գկ. «Այսօր հրեշտակաց
դասք»(սարօքն): Հրց. Մրտ. գկ.
«Չինուորութիւնք»: Ժմտ. «Չօրա-
կան եւ վկայ»: Յերեկոյին՝ «Ս.
Աստուած որ խաչեցար»: Հմբ. դձ.
«Որ զօրէնս սրբութեան»: «Ս.
Խաչիւս», «Կեցո», «Պահպան-
եա»: Ճշ. ընթ. (Իմստ 8.19-9.5: Ես
62.6-9: Հռ 8.28-39: Մտ 10.16-22):

Իսլամական տոմարաւ՝

Շաապան, 29 օր

6 **✠ Կիր. ԴԶ. Է. օր Մեծի Պահոց:** 2
**Բ. Քառասնորդաց: ԱՐՏԱՔՍ-
ՄԱՆ:** Չկնի «Ետուն ըմպել»իս

0. ՄԱՐՏ 61 L.

Երգ՝ «Տրտմահաղորդ»: Օրհ. դձ.
«Որ գօրէնս սրբութեան» (իւր
սարօքն): Ճշ. ընթ. (Ես 33.2-22:
Յռ 12.1-13.10: Մտ 5.17-48):

Ջերմութիւն արեւու իջանէ ի հողն

7 **ԲԶ. ԴԿ. Ը. օր Մեծի Պահոց:** Հրց. 3

ապշ. ակ. ա. «Չանուն քո Բրիս-
տոս օրհնեմք»: Ճշ. ընթ. (Ա.Թգ
1.1-23: Առ 1.1-33: Եր 1.1-10):

8 **ԳԶ. ԱԶ. Թ. օր Մեծի Պահոց:** Հրց. 4

ապշ. ակ. բ. «Որ խոնարհեցար»:
Ճշ. ընթ. (Ա.Թգ 1.23-2.26: Առ 2.1-
3.10: Եր 1.11-2.3):

9 **ԴԶ. ԱԿ. Ժ. օր Մեծի Պահոց:** Հրց. 5

ապշ. ակ. գ. «Աստուած հարցն
մերոց»: Ճշ. ընթ. (Ելք 2.11-22:
Յվլ 2.1-11: Մք 4.1-7):

10 **ԵԶ. ԲԶ. ԺԱ. օր Մեծի Պահոց:** 6

Հրց. ապշ. ակ. դ. «Օրհնեալ եւ
փառաւորեալ»: Ճշ. ընթ. (Ա.Թգ

Օ. 62

ՄԱՐՏ

Լ.

3.21-4.18: Առ 3.11-4.14: Եր 2.31-3.16):

Սկիզբը ցրտոյն պատաւացն



Առաջին քառորդ լուսնի
Ամպամած եւ անձրեւային եղանակ

- | | | |
|----|--|---|
| 11 | Ուր. ԲԿ. ԺԲ. օր Մեծի Պահոց:
Հրց. ապշ. ալ. գ. «Չանճառ
Էութիւն»: Ճշ. ընթ. (Բ.Օր 7.11-
8.1: Յոր 9.1-10.2: Ես 40.9-17): | 7 |
| 12 | Շբ. ԳՁ. ԺԳ. օր Մեծի Պահոց:
Սրբոցն՝ Կիւրղի Երուսաղեմայ
հայրապետին, եւ միւս Կիւրղի
Եպիսկոպոսին եւ մօրն Նորա
Աննայի: Օրհ. մրտ. գձ. «Չարիա-
կան մահ սրբոց»(սարօքն): Հրց.
դձ. «Որք հաղորդեցան»: Մնկ.
«Մանկունք Նոր»: Ժմտ. «Չհայ-
րապետականն»: Հմբ. գկ. «Օրհ-
նեմք զքեզ»: Ճշ. ընթ. (Առ 11.2- | 8 |

0.	ՄԱՐՏ	63	L.
	11: Ես 61.3-7: Բ.Տմ 4.1-8: Յհ 10.11-16):		
13	Ճ Կիր. ԳԿ. ԺԴ. օր Մեծի Պահոց: Գ. Քառասնորդաց: ԱՆԱՌԱԿԻՆ: Չկնի «Բարբառելով»ին երգ՝ «Չարհուրեցան»: Օրհ. գկ. «Օրհնեմք գքեզ» (իւր սարօքն): Ճշ. ընթ. (Ես 54.11-55.13: Բ.Կր 6.1-7.1: Ղկ 15.1-32):	9	
14	Բշ. ԴՁ. ԺԵ. օր Մեծի Պահոց: Յրց. ապշ. բձ. ա. «Օրհնեալ Տէր Աստուած»: Ճշ. ընթ. (Կղ 2. 8- 3.4):	10	
15	Գշ. ԴԿ. ԺԶ. օր Մեծի Պահոց: Յրց. ապշ. բձ. դ. «Ուղիղ են ճա- նապարհք քո»: Ճշ. ընթ. (Եբր 11.1-31):	11	
16	Դշ. ԱՁ. ԺԷ. օր Մեծի Պահոց: Յրց. ապշ. բկ. բ. «Որ հարցն մե- րոց Աստուած»: Ճշ. ընթ. (Ելք 2.23-3.15: Յվլ 2.21-32):	12	

Օ. 64

ՄԱՐՏ

Լ.

17 **ԵԶ. ԱԿ. ԺԸ. օր Մեծի Պահոց:** 13
Յրց. ապշ. բկ. գ. «Մանկունքն գերեալք»: Ճշ. ընթ. (Ես 45.16-26: Եփ 3.14-4.13):

18 **Ուր. ԲԶ. ԺԹ. օր Մեծի Պահոց:** 14
Յրց. ապշ. բկ. գ. ստեղի՝ «Աստուած հօօր»: Մնկ. բձ. ստեղի՝ «Օրհնեցէք մանկունք զՏէր եւ օրհնեցէք զանուն Տեառն»: Ալէլուիա (Տե՛ս զկնի Յարցիկ): Ճշ. ընթ. (Բ.Օր 8.11-9.10: Յոբ 12.1-13.6: Ես 42.1-8):

Վերջ ցրտոյն պառաւացն



Լրումն լուսնի

Գարնանային անձրեւ

19 **Շբ. ԲԿ. Ի. օր Մեծի Պահոց:** 15
Սրբոյն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, եւ սրբոց հայրապետացն մերոց՝ Յովհաննու Օձ-

ՆԵՐՍԻՆ, ՅՈՎԻԱՆՆՈՒ ՈՐՈՍՆԵՐՆԵՐՆԵՐ, ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՔԵԼԱՅԵՐՆԵՐ:

Օրհ. ակ. «Որք զարդարեցին» (իւր սարօքն): Ժմտ. «Չհայրապետականն»: Ծշ. շրկ. գձ. «Չառաջնորդս եւ զվարդապետս»: Յմբ. գձ. «Որ արարեր»: Ծշ. ընթ. (Առ 20.6-22: Բրք 4.21-24: Բ.Կր 4.1-11: Յհ 9.39-10.10):

Լտ. Ս. Յովսեփայ Աստուածաւորն

20 ✠ Կիր. ԳՁ. ԻԱ. օր ՄԵԾԻ Պահոց: 16

Դ. Քառասնորդաց: ՏՆՏԵՍԻՆ:
Չկնի «Աղբերաց»ին երգ՝ «Տրտմահաղորդ»: Օրհ. գձ. «Որ արարեր» (իւր սարօքն): Ծշ. ընթ. (Ես 56.1-57.21: Եփ 4.17-5.14: Ղկ 16.1-31):

Իսլ. Յայտնութիւն

(Պէրաթ)

Օ. 66

ՄԱՐՏ

Լ.

21 **ԲԶ. ԳԿ. ԻԲ. օր Մեծի Պահոց:** 17
Հրց. ապշ. գծ. ա. «Փառաւորեալ»:
Ճշ. ընթ. (Եր 32.19-44):

Գարնանամուտ եւ հասարակաց
Լինին տիւ եւ գիշեր հաւասար

⊗ Ի Խոյն

Առաջին ամիս
Գարնանային

22 **ԳԶ. ԴԶ. ԻԳ. օր Մեծի Պահոց:** 18
Հրց. ապշ. գծ. բ. «Փառաւորեալ
Է»: Ճշ. ընթ. (Յոր 38.1-39.36):

Հայկական տոմարաւ՝
Արեգ, 30 օր

23 **ԴԶ. ԴԿ. ԻԴ. օր Մեծի Պահոց:** 19
Հրց. ապշ. գծ. դ. «Հարցն մերոց
Աստուած»: Այսօր սկսանել
զստեղիսն յերեկոյս՝ ցվերջին

Ուրբաթն Մեծի Պահոց: Ճշ. ընթ.
(Ելք 3.16-22: Յվլ 3.1-8):

ՄԻՋԻՆՔ

24 **ԵՂ. ԱՁ. ԻԵ. օր Մեծի Պահոց:** 20
Հրց. ապշ. գձ. գ. «Օրհնեալ ես
Տեր Աստուած»: Ճշ. ընթ. (Ա.Կր
8.5-9.23):

25 **Ուր. ԱԿ. ԻՉ. օր Մեծի Պահոց:** 21
Հրց. ապշ. գկ. բ. «Աստուած
բարձրեալ»: Ճշ. ընթ. (Բ.Օր 9.11-
23: Յոբ 16.1-17: Ես 43.22-44.8):

ՅՆ. ԵՆ ԼՍ.

Ա.ԼԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ



Վերջին քառորդ լուսնի

Գարնանական անձրեւ

26 **Շբ. ԲՁ. ԻԷ. օր Մեծի Պահոց:** 22
Սրբոց Մանկանցն Քառասնից

որը 'ի Սեբաստիա կատարեցան:

Օրհ. գկ. «Այսօր ընդ անմարմ-
նոցն» (իւր սարօքն): Մնկ. դկ.
ստեղի՝ «Լուսապսակացն»:
Ժմտ. «Գնալով փառաց»: Յմբ.
բկ. «Որ պատուիրան»: Ճշ. ընթ.
(Իմստ 3.1-8: Նհ 2.1-4: Ես 43. 1-
3: Եփ 6.10-18: Մտ 13.43-52):

27 ✠ **Կիր. ԲԿ. ԻԸ. օր Մեծի Պահոց:** 23

Ե. Քառասնորդաց: ԴԱՏԱԻՈՐԻՆ:

Չկնի «Նորոգող»ին երգ՝ «Չար-
հուրեցան»: Օրհ. բկ. «Որ պատ-
ուիրան» (իւր սարօքն): Ճշ. ընթ.
(Ես 65.8-25: Փլպ 3.1-4.9: Ղկ
17.20-18.14):

28 **Բշ. ԳՁ. ԻԹ. օր Մեծի Պահոց:** 24

Յրց. ապշ. դձ. ա. «Յարցն մերոց
Աստուած, որ ապրեցուցեր»: Ճշ.
ընթ. (Եբր 1.1-14):

29 **Գշ. ԳԿ. Լ. օր Մեծի Պահոց:** Յրց. 25

ապշ. դձ. բ. «Յարցն մերոց Աստ-

0. ՄԱՐՏ 69 L.

ուած, որ ի ներդրեան»: Ճշ. ընթ.
(Ես 8.5-10):

30 **ԴՁ. ԴՁ. ԼԱ. օր Մեծի Պահոց:** 26

Հրց. ապշ. դձ. դ. «Որ յամենայնի
ցուցեր»: Ճշ. ընթ. (Ելք 4.1-21:
Յվլ 3.9-21):

31 **ԵՁ. ԴԿ. ԼԲ. օր Մեծի Պահոց:** 27

Հրց. ապշ. դձ. ե. «Ճշմարտապէս
գոհանամք»: Ճշ. ընթ. (Ես 53.1-
54.5: Ա.Կր 15.1-28):



ԱՊՐԻԼ

30

- 1 Ուր. ԱԶ. ԼԳ. օր Մեծի Պահոց: 28
Հրց. ապշ. դձ. գ. «Տեր Աստուած մեր»:

Յերեկոյին նախատօնակ արա:
Շրկ. գկ. «Այսօր զուարճացեալ»
(իւր սարօքն, յատեանն: Յասելն՝
բանան զվարագոյր սեղանոյն
յորում պատարագն մատչելոց
իցէ): Ճշ. ընթ. (Բ.Օր 10.1-15: Յոր
19.1-29: Ես 45.1-13):



Ծնունդ լուսնի
Մերք պարզ, մերք անձրեւ
եւ մերք ամպամած

2 ✠ Շբ. ԱԿ. ԼԴ. օր Մեծի Պահոց: 29

ՏՕՆ Է ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԴՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ ՍՈՍԿԱԼԻ ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅՆ 'Ի ՎԻՐԱՊՆ: Ի տեղի հանգրստեան շարականի՝ ալ. «Ծով կենցաղոյս»: Օրհ. գկ. «Այսօր գուարճացեալ»: Թագ. յաւ. «Այսօր Դասք»: Յրց. դկ. «Որ ի Յօրէ» (իւր սարօքն): Չկնի «Տէրն յետ ստեղծման»ին երգ՝ «Յաւատարիմ եւ իմաստուն»: Ժմտ. «Յնծա այսօր եւ Գրիգոր սուրբ քահանայապետ»: Սրբ. «Ամենակալ»: Չկնի պատարագին ծածկեսցեն գսեղանն եւ այլ եւս մի՛ բացցեն մինչեւ 'ի Ծաղկազարդն:

Օ. 72

ԱՊՐԻԼ

Լ.

Յմբ. բձ. «Որ գխորհուրդ»: Ճշ.
ընթ. (Իմստ 1.15-2.22: Մք 7.7-10:
Փլպ 1.12-21: Մտ 16.24-28):

3 ✠ Կիր. ԲՁ. ԼԵ. օր Մեծի Պահոց: 1

2. Քառասնորդաց: ԳԱԼՍԵԱՆ:
Չկնի «Ետուն ըմպել»ին երգ՝
«Տրտմահաղորդ»: Օրհ. բձ. «Որ
գխորհուրդ» (իւր սարօքն): Ճշ.
ընթ. (Ես 66.1-24: Կղ 2.8-3.17:
Մտ 22.34-23.39):

**ՈՒՆՏԻ ՕՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱՐԱՆԻՍ**

Հանդիսաւոր Ս. Պատարագ
եւ մեծահանդէս թափօր
Աջովն Ս. Լուսաւորչի

Իսլամական տոմարաւ՝
Րամատան, 30 օր
Սկիզբ ծոմապահութեան ամսոյ

Օ.	ԱՊՐԻԼ	73	L.
4	ԲԶ. ԲԿ. ԼԶ. օր Մեծի Պահոց: Հրց. ապշ. դկ. ա. «Աստուած հարցն մերոց ողորմեա»: Ճշ. ընթ. (Դն 7.2-27: Ա.Կր 12.1-7):	2	
5	ԳԶ. ԳԶ. ԼԷ. օր Մեծի Պահոց: Հրց. ապշ. դկ. գ. «Հարցն մերոց օրհնեալ»: Ճշ. ընթ. (Ա.Կր 12.8-27):	3	
6	ԴԶ. ԳԿ. ԼԸ. օր Մեծի Պահոց: Հրց. ապշ. դկ. դ. «Օրհնեալ Տեր Աստուած օրհնեալ»: Յերեկոյին նախատօնակ արա: Շրկ. ակ. «Խորհուրդն անճառ» (իւր սարօքն): Բացցե՛ն զվարագոյրսն: Քրզ. «Ս. զԱստուածածինն», «Ընկալ Տեր»: Ճշ. ընթ. (Ելք 4.21-5.3: Չք 9.9-16):	4	
7	ԵԶ. ԴԶ. ԼԹ. օր Մեծի Պահոց: ՏՕՆ ԱԻՇՏՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԻՆ: «Ժողովեալքս»ին երգ՝ «Կուսածին»: Օրհ. ակ. «Խոր-	5	

հուրդն անճառ»(յատեանս, իւր սարօքն): Ալէլուք ծննդեան: Առաւօտու երգ՝ «Իջցէ որպէս զանձրել»: Զրգ. «Մայր սուրբ»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Գիրք, Ալէ. «Յոգին սուրբ եկեցցէ», Աւետ.: Չկնի «Չհանդուրժեալ» երգ՝ «Ծածկեալ խորհուրդըն»: «Խնդր.», «Կեցո», «Զում ամենագոր»: Ժմտ. «Աստուածածին անհարսնացեալ»: Սրբ. «Բազմութիւնք»:

Յերեկոյին Մես. «Մեծացուցէ»: Զրգ. «Մայր սուրբ»: Յմբ. դկ. «Աստուածածին սուրբ Կոյս»: «Ս. զԱստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տէր»: Չկնի երեկոյեան ժամերգութեան վարագուրեցեն զսեղանս: Ճշ. ընթ. (Եզ 37.1-14: Ա.Տմ 3.14-16: **Գիրք եւ Աւետարան անտման.**- Երգ 1.1-11: Առ 11.30-12.4: Ես 52.7-10: Չք 2.10-

Օ. ԱՊՐԻԼ 75 Լ.

13: Մղ 3.1-2: Բ.Կր 6.16-7.1: Ղկ 1.26-38):

8 **Ուր. ԴԿ. Խ. օր Մեծի Պահոց:** 6

Յրց. ապշ. դկ. Է. ստեղի՝ «Օրհնեալ Տէր Աստուած հարցն»: Մկ. դկ. ստեղի՝ «Յոյս իմ՝ ի մանկութենէ»: Ճշ. ընթ. (Բ.Օր 11.10-25: Յոր 21.1-34: Ես 46.3-47.4):

9 **✠ Շբ. ԱԶ. Յիշատակ է Յարութեանն Ղազարու:** 7

Այսօր սկսեա՛ստել զհանգստեան շարականն ի պաշտաման Աւետարանին: Չկնի «Ռահ գործեալ»ին երգ՝ «Ձայնեցեր առ Ղազարոս»: Օրհ. աճ. «Այսօր գոլով ի Բեթանիա»(իւր սարօքն): Առաւօտու երգ՝ «Տէր հաներ»: Զրգ. «Փառաւորեցուք»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Մկ. դկ. ստղ. «Յիսուս Միածին»: Գիրք, Աւետարան, «Յոգւոց»: Երգ՝ «Տէրն յետ

ստեղծման»: «Խնդր.», «Կեցո», «Քում ամենազոր»: Ժմտ. «Չղագարու ննջումն» եւ «Յորժամ եկեալ»: Սրբ. «Վասն Յիշատակի»:

Յերեկոյին՝ «Լոյս զուարթ» (ձայնիւ): Մես. «Օրհնեալ որ գաս»: Քրգ. «Ասասցուք»: «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Յմբ. ած. «Որ վերօրհնիս» (յատեանն: Ի սկսանելն բացցեն զխորանն): «Կեցո», «Թագ. խաղաղութեան»: Ծշ. ընթ. (Առ 14.27-35: Ա.Թս 4.12-17: Յհ 11.55-12.11):



Առաջին քառորդ լուսնի
Մերթ պարգ, մերթ անձրեւ

10 ✠ Կիր. ԱԿ. ԾԱՂԿԱԶԱՐԴ: Ի 8
գիշերին հսկումն է եւ դիցեն
գարբութիւնն ի վերայ սեղանոյն:

Չկնի «Ճանապարհ մուրե-
լոց»ին երգ՝ «Թագաւոր փա-
ռաց»: Եւ ապա Յետ. շրկ. դձ.
«Թագաւոր գոլով» (գչորեսին ի
միասին ասա): Օրհ. աձ. «Որ
վերօրհնիս» (յատեանն): Իւղա-
բերից Աւետարան գթադմանն
միայն կարդա եւ գկնի՝ «Չա-
մենայն աւուրս կենաց իմոց»:
ՉՏեր յերկնիցն երգեսցեն յատ-
եանն: Առաւօտու երգ՝ «Այսօր
մտանէ»: «Ասասցուք»: «Ս. Աստ-
ուած որ եկիր եւ գալոց ես»:
Ապա շրկ. աձ. «Որ վերօրհնիս»,
Գիրք, ԱԼԷ. «Օրհնեալ եկեալ
անուամբ Տեառն», Աւետարան,
Անդաստան: Քրգ. «Ս. Խաչիւս»,
«Կեցո», «Պահպանիչ»: Եւ եր-
թայցեն ի գերեզմանսն: Ժմտ.
«Յորժամ եկեալ»: Շրկ. դկ. «Յի-
սուս միածինն»: Սղմ. ՃԻԹ. ձայ-
նիւ՝ «Եղիցին ականջք քո», Աւե-

տարան եւ գկնի՝ «Յոգւոց»: Ապա սկսանիցին շրկ. բկ. «Այսօր ընդ հրակերպեան»: «Նորաստեղծեալ» (2 տուն): «Խնդր.», «Կեցո», «Քում ամենագոր գալստեանդ»: Ճշ. ժմտ. «Յնծա Երուսաղէմ»: Սղմ. «Տէր թագաւորեաց»: Սրբ. «Յրեշտակային»: Ճշ. ընթ. (Երգ 1.1-2.3: Չք 9.9-15: Փլպ 4.4-7: Մտ 20.29-21.17):

Լտ. Ծաղկագարդ
Յերեկոյին՝ Դոնբացէք
(Տե՛ս ՚ի Տօնացուցի)

11 ✠ ԱՒԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԱԹ: ԲՁ. 9

Պահք: Օրհ. բձ. «Անեղն ի Զօրէ» (իւր սարօքն): Զրգ. «Փառաւորեցուք», «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Մնկ. բձ. ստեղի՝ «Ալէլուիա»: Չկնի՝ Զրգ. «Վասն

խաղաղութան»: Աղթ. «Սուրբ եւ Տէր»: Սղմ. ՃԳ. «Ողբաձայն»: Աւետարան, «Արարչական»: Ապա «Խնդր.», «Կեցո», «Քում ամենագոր եւ հրաշալի գալըստեանդ»: (Չմաղթանս եւս գալստեան ասա ցՈւրբաթ օրն):

Յայս երիս աւուրս Արեւագալի կանոն ոչ գոյ, եւ ոչ «Տէր Ամենակալ»ի, եւ ոչ պատարագ մատուցանելոյ, եւ ոչ մեծ քարոզից եւ աղօթից: Ի ճաշու գերիս «Ողորմեա»յսն ասասցեն: Չկնի՝ հանգստեան շարական, եւ «Յոգւոց»:

Յերեկոյին՝ «Խոնարիեցո» եւ «Ապրեցո»: Մես. «Բերան արդարոյ»: Գիրք, Քրգ. «Աղաչեսցուք»: «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Յմբ. բձ. «Որ յանէից»: Քրգ. «Վասն խաղաղութան», «Յայր

գթած»: Սղմ. ԿԴ., Ալետարան, «Խնդր.», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: Ճշ. ընթ. (Ստ 21.18-22.14: Ծն 1.1-3.24: Առ 1.1-9: Ես 40.1-8: Ստ 20.17-28):

12 ✠ **ԱՄԱԳ ԵՐԵՔՆԱԲԱԹ: ԲԿ. Պահք:** 10

(Յիշատակ տասն կուսանաց):
Օրհ. բկ. «Իմաստուն կուսանքն» (իւր սարօքն): Չկնի «Սուրբ ես Տէր» աղօթիցն՝ Սղ. ԽԴ. «Ողբաձայն», Ալետարան: Ապա «Էական», «Կեցո», «Քում ամենագոր»:

Յերեկոյին՝ Մես. «Քաղցրութիւն արարեր»: Գիրք: Քրգ. «Աղաչեսցուք»: «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Յմբ. բձ. «Շնորհեամեզ Տէր»: Չկնի «Յայր գթած»ին՝ Սղ. ԻԴ. «Ողբաձայն» (լման): Եւ յասելն՝ զգեցուցեն զտասն մանկունսն եւ տացեն ի ձեռս

նոցին մոմեղէնս վառեալս յօրինակ տասն կուսանացն, որք եկեալ կանգնեսցին առաջի Աւետարանին: «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: Ճշ. ընթ. (Մր 12.13-44: Ծն 6.9-9.17: Առ 9.1-10.6: Ես 40.9-17: Ստ 24.1-26.2):

13 ✠ **ԱՄԱԳ ՉՈՐԵՔՆԱԲԱԹ: ԳՁ.** 11

Պատիւ: Օրհ. գծ. «Որ յաթոռ փառաց» (իւր սարօքն): Չկնի «Սուրբ ես Տէր» աղօթիցն՝ Սղմ. Խ. «Ողբածայն» (լման), Աւետարան: «Խաւարն անգոյ», «Կեցո», «Քում ամենագօր»:

Յերեկոյին՝ Մես. «Նայեա եւ լուրիսձ»: Գիրք: «Ս. Աստուած որ եկիր եւ գալոց ես»: Չկնի «Հայր գթած»ին՝ Սղմ. Խ., Աւետարան, «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: Ճշ. ընթ. (Մր 14.1-11: Ծն

18.1-19.30: Առ 1.10-19: Չք 11.11-14: Մտ 26.3-16):

14 ✠ ԱԲԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ: ԳԿ. Պահք: 12

(Յիշատակ Ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Ոտընլուայն): Օրհ. գձ. «Վերածգողն» (իւր սարօքն): Չկնի «Սուրբ եւ Տեր» աղօթիցն՝ Սղմ. ՂԳ. «Ողբաձայն», Աւետարան: «Ճառագայթեալ», «Կեցո», «Քում ամենագոր»: Ապա կարգ արձակելոյ զապաշխարողսն: Թէ իցէ եւ թէ ոչ՝ զկարգն կատարել պարտ է (Տե՛ս ի Տօնացուցի):

Ի ճաշուն ծածկեցեն զսեղանն եւ ասացեն զմնացեալ «Ողորմեա»յսն: Ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Մես. «Լուացից սրբութեամբ»: Գիրք, Աւետարան: Մինչ ընթեռնուն զսա, ելցէ պատարագիչն ի սեղանն եւ զգես-

տաւորեցի եւ քաղեցէ զխոր-
հուրդն մինչեւ ի «Յաւատամք»ն:
Քրգ. «Աղաչեցուք»: «Ս. Աստ-
ուած որ եկիր եւ գալոց ես»:
Հմբ. ալ. «Այսօր կանգնեցաւ»:
Քրգ. «Վասն Խաղաղութեան»:
Չկնի «Հայր գթած»ին՝ Գիրք,
Աւետարան: Ապա բացցեն զտե-
ղանն եւ ասացեն զ«Յաւա-
տամք»ն: Սրբ. «Որ վերանս-
տիս»:

Յորժամ պատարագիչն հասա-
նիցի «Եւ տուր մեզ համար-
ձակաձայն»ին, ելցէ աւագ երեցն
ի բեմն՝ ունելով ի ձեռին Խաչ եւ
Աւետարան, եւ կարկառելով
զձեռն, զեկուցանէ ժողովրդեանն
զբան Սրբոյն Բարսղի ի լուր
ամենեցուն: Եւ յաւարտիլն,
սկսանիցին զ«Հայր մեր»ն: Իսկ
յորժամ «Քրիստոս պատարագ-

եալ»ն վճարիցի, ասասցեն դր-
պիրքն գտաղ «Եկայք մարդիկ»:
Ճշ. ընթ. (Յհ 12.27-43: Ես 60.20-
22: Եզ 36.24-31: Եբր 10.19-31:
Ղկ 7.36-50: Ծն 22.1-18: Ես 61.1-
7: Գրծ 1.15-26: Մր 14.1-26: Ա.Կր
11.23-32: Մտ 26. 17-30: **Կարգ
Ոտնլուայի:** Ելք 30. 17-21: Գ.Թգ
7.40-51: Բ.Մն 4.2-6: Ես 44.2-6:
Ա.Կր 10.1-4: Ա.Յհ 4.7-21: Յհ
13.1-11: **Չկնի լուացման:** Յհ
13.12-15):

Յերեկոյին՝ Ոտնլուայ
(Տե՛ս ՚ի Տօնացուցի)
ի գիշերին հսկումն է

15 ✠ **ԱԻՎԳ ՈՒՐԲԱԹ: ԴՁ. Պահք: (Յի- 13**
շատակ Չարչարանաց, Խաչելու-
թեան եւ Թաղման Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի): Կանոնա-
գլուխ դձ. «Օրհնեա անձն իմ

գՏեր»։ Յետ. շրկ. դձ. «Այսօր ի կատարումն» (Տե՛ս ի Տօնացուցի մինչ յերկրորդ կանոնագլուխն)։ Օրհ. բձ. «Արժաթսիրութեամբն» (իւր սարօքն)։ Իսկ յորժամ հասանիցեն ի Տեր յերկնից շարականն, թաքուցեն զմի մեծ մնացեալ մոմեղէնն եւ երգեսցեն զ«Փառք ի բարձունս», եւ յորժամ վճարիցի, հանցեն զվառեալ մոմն։ Քրգ. «Փառաւորեսցուք»։ «Ս. Աստուած որ մատնեցար»։ Չկնի Սղմ., Աւետարան, «Չհանդուրժեալ»։ «Խնդր.», «Կեցո», «Քում ամենազօր եւ հրաշալի մատնութեանդ»։ Ապա շրկ. բձ. «Խաչի քո Քրիստոս։ Փառք սուրբ Խաչիդ՝ ալէլուիա. սուրբ մատնութեանդ՝ ալէլուիա. չարչարանացդ՝ ալէուիա։ Խաչն կենարար»։ «Ս. Խաչիւս», «Պահպանեա»։ Ապա ընթեռնուցուն

գԿտակն Մեծին Ուրբաթու՝ որ
յաղագս խաչելութեան Քրիս-
տոսի:

Այսօր ի ցերեկին ծունր կրկնելոյ
հրաման ոչ գոյ մինչեւ ցերեկոյի
ժամն:

Ի ճաշու ժամուն կատարեսցեն
գԿարգ Խաչելութեանն, ըստ
Տօնացուցի:

Յերեկոյին՝ «Խոնարհեցո» եւ
«Ապրեցո»: «Լոյս զուարթ» (ձայ-
նիւ): Քրգ. «Աղաչեսցուք»: «Ս.
Աստուած որ խաչեցար» (ի
ծունկս անկեալ, առանց Փառա-
ւորեալի): Յմբ. դկ. ստղ. «Եկայք
հաւատացեալք»: «Յայր գթած»:
«Ս. Աստուած որ թաղեցար»
(յոտնկայս, զՓառաւորեալն եւս
ասա):

Ապա նախատօնակ արա: Շրկ.
բձ. «Պարգեւատուն ամենեցուն»

(հւր սարօքն): «Խնդր.», «Կեցո», «Քում ամենազօր եւ հրաշալի թաղմանդ»: Եւ դիցեն զսուրբ խաչն ի վերայ սեղանոյն պատեալ սպիտակ դաստառակաւ, ի խորհուրդ պատանացն Քրիստոսի:

Շրկ. բկ. «Խաչի քո Քրիստոս...եւ զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք, եւ զսուրբ թաղումնդ քո փառաւորեմք»: Ապա՝ շրկ. բկ. «Փառք սուրբ խաչիդ»: Շրկ. բկ. «Խաչն կենարար»: «Ս. խաչիւս», «Պահպանիչ»: Տաղ ողբաձայն՝ «Աստուածածին Կոյս Մարիամ»: Ճշ. ընթ. (Յհ 13.16-18.1: Ղկ 22.1-65: Մր 14.27-72: Մտ 26.31-56: Մտ 26.57-75: Յհ 18.2-27: Յհ 18.28-19.16: **Կարգ թաղման:** Եր 11.18-12.8: Ես 52.13-53.12: Իմստ 2.1-22: Չք

12.8-14: Ա.Պտ 3.17-20: Մտ
27.57-61):

16 ✠ **ԱԻԱԳ ՇԱԲԱԹ. ԴԿ . ՃՐԱԳԱ-** 14
ԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ: Ի գիշե-
րին վառեցեն լոյս յԱւագ Խո-
րանն միայն: Շրկ. Հանգստեան:
Չկնի «Աստուած անեղ»ին՝ «Յետ
կամաւոր»: Ապա «Չմահու
Դատեան» (յատեանն): Օրհ. բձ.
«Պարգեւատուն» (իւր սարօքն):
Քրգ. «Փառաւորեցուք»: «Ս.
Աստուած որ թաղեցար»: Մնկ.
դկ. ստեղի «Յովսէփ քեզ հաւա-
տացեալ»: Աւետարան: «Տէրն
յետ ստեղծման»: «Խնդրեցուք»,
«Կեցո», «Քում ամենագօր եւ
հրաշալի թաղմանդ»: Ապա շրկ.
բկ. «Խաչի քո Քրիստոս» (ըստ
երեկոյի կանոնին): «Փառք սուրբ
խաչիդ», «Ս. Խաչիւս», «Պահ-
պանիչ»:

Յերեկոյին ճրագալուցի, ծածկեալ ունելով զՍեղանն, ասացեն գերիս «Ողորմեա»յսն եւ զմնացեալն (Տե՛ս ՚ի Տօնացուցի): Ժմտ. «Քրիստոս յարեալ»: Փոխ՝ «Գովեա Երուսաղէմ»: ԾՁ. շրկ. աճ. «Յարեալ Քրիստոս»: «Ս. Աստուած որ յարեար»: ԾՁ. Ալէ. «Յարեալ Աստուած»: Սրբ. «Ո՞վ է որպէս»: Չկնի սրբոյ Պատարագի նախատօնակ արա: Շրկ. աճ. «Այսօր յարեալ» (իւր սարօքն): «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: **Նաւակատիք**: ԾՁ. ընթ. (Ա.Կր 15.1-11: Մտ 28.1-20):

Լտ. ճրագալոյց Ս. Զատկի



Լրումն լուսնի
Զուարթագին եւ ախորժելի օդ

17 ✠ Կիր. ԱՁ. Ս. ՉԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱ- 15

**ՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻ-
ՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:** Ի գիշերին
հսկումն է եւ դիցեն զսրբութիւնն
ի վերայ բազմոցին: Կանոնա-
գլուխ աձ. «Դատեա Տէր զայ-
նոսիկ»: Օրհ. աձ. «Այսօր յար-
եաւ» (իւր սարօքն: Յատեանն):
Իւղաբերից Աւետարան Յարու-
թեան մասն (Յայսմ Յիւսեօս կի-
րակէից Իւղաբերից Աւետարան
